

Սարգիս Սահակյանը հանդիպեց Արագածի տարածաշրջանի բնակիչների հետ

Սեպտեմբերի 1-ին մարզպետ Սարգիս Սահակյանն այցելեց Արագածի տարածաշրջան: Նա եղավ Մելիքոյուղ, Ճարճակիս, Ռյա Թազա համայնքներում եւ հնդիպում ունեցավ բնակիչների հետ:

Եզդիաբնակ այս համայնքները գտնվում են բարձր լեռնային գոտում եւ, ըստ էության, ունեն բնակլիմայական, աշխարհագրական միանման պայմաններ: Դրանով պայմանավորված՝ բոլոր համայնքներում էլ առկա են սոցիալ-տնտեսական նույնատիպ խնդիրներ, ինչի շուրջն էլ բնակիչները գրուցեցին մարզպետի հետ:

Լսելով ջրամատակարարման, գյուղատնտեսական արտադրանքի իրացման, մթերման կետերի ստեղծման եւ այլ խնդիրների վերաբերյալ բնակիչների հարցադրումները, Սարգիս Սահակյանն անհրաժեշտ պարզաբանումներ կատարեց, համապատասխան հանձնարարականներ տվեց բարձրացված հարցերի լուծման համար:

Բնակիչները շնորհակալություն հայտնեցին մարզի ղեկավարին՝ իրենց այցելելու համար եւ նրան դիմեցին նաեւ անձնական մի շարք հարցերով: Մարզպետը տեղում դրանց դրական լուծման պատասխաններ տվեց: Մի խումբ բնակիչներ ստացան դրամական աջակցություն: